Ավետիք Իսահակյան

Մեծ հաղթանակի օրը

(9 մայիսի 1945)

Մեր սուրը փառքով դրեցինք պատյան, -
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից.
Պարտվեց մահաշունչ ոսոխը դաժան,
Երգեր են հորդում զվարթ սրտերից:

Հոծ փողոցներում աղմուկ ու շառաչ,
Հոսում են մարդիկ ծափով, ծիծաղով,
Մի մարդ սեղան է բացել տան առաջ,
Լցրել թասերը ոսկեփայլ գինով:

Եվ անցորդներին կանչում է, խնդրում, -
Եղբայրնե՞ր, որդուս կենացը խմե՛նք.
Հերոս է որդիս, հաղթեց թշնամուն,
Ձեր որդիների կենացն էլ խմենք:

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,
Եվ զարկում նորից գավաթներն իրար:
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ, -
Է՛ս էլ իմ որդուս հանգստյան համար:

Գլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լռում են մի պահ.

Խմում են անձայն զոհվածի համար
Եվ հեղում գինին սուրբ հացի վրա:

1945
Երևան